Գանձապետի մօտ կայ պատրաստի գումար դրամոց . . . 5 62|2

Ընդ ամեն գումարն է 1527 92

Նախագահ Թադէոս Աւ. քհնյ. Բուդաղեանց
Հոգաբարձուք Յակովբ Ադամեանց
Մուսայէլ Շահկեսարեանց
Բաղդասար Սարգիսեանց
Խաչատուր Կիրիեանց
Գանձապետ Գրիգոր Դիլդարեանց

ՍՈՒՐՀԱՆԴԱԿՔ ԲՈՒՋԱՆԴԵԱՆ.

ՎԱՆՔԻ ՅՈՒՆԱԴԱՒԱՆ ՀԱՅՔ

Ակնայ Վանք գիւղի Հայայոյն վարժարանին հարցաքննութեան վրայ հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդեն մեզ ի հրատարակութիւն, զոր կը հրատարակենք ի գիտութիւն ազգայնոց և ի քաջալերութիւն աշակերտաց, շնորհակալ ըլլալով Մեծ. Եանքօ էֆ. Եանքօեանէն՝ որ ազգասիրաբար փութալով յիշեալ վարժարանի հոգաբարձութիւնն ու խնամակալութիւնն ընդունելու, մեծ յոյս կուտայ քիչ ժամանակէն յիշեալ Հայայոյն հասարակութեան՝ բուն իսկ իւր ազգայնութիւնը համարուող հանգամանաց տիրանալու։

Ահաւասիկ նամակին օրինակը։

«Նախընթաց կիւրակէ Յուլիս 28 գիւղիս Ս. Գէորգ եկեղեցւոյ վարժարանիս աշակերտաց Յունարէն և Հայերէնի տարեկան հարցաքննութեան հանդէսը կատարեցաւ ընդ նախագահութեամբ Գեր. Իակոբոս սրբազանի և մաքրակրօն Գիլոթէոս հօր և ի ներկայութեան գիւղիս Մեծ. Տեարց և ժողովրդոց. քննիչ կանչուած էին Մուրատեան Խոսրով, Դերձակեան Աղարիա և Գրիգորեան Յակոբ էֆ Ները դպրոցին Հոգաբարձու Մեծ. Եօրտան էֆ ի հրաւիրանաց, որք գալով քննեցին Յունարէն և Հայերէն դասերը. աշակերտք ինչ աստիճան յաջողակ ըլլալնին պատմելը մեզ չը-պատկանելուն՝ կը թողում հոգաբարձութեան և ներկայելոց. քննութիւնը սկսաւ առաւօտեան ժամ 1 ին և տևեց ժամ 6. Աղարիա էֆ Դերձակեանը իւր շնորհակալութիւնը և զգացումը յայտնելով, հակիրճ ատենախօսութիւն մ'ըրաւ աշակերտաց ուղղեալ. անկէց քննիչք մեկնեցան գնալու Հոգաբարձու Եօրտան էֆէնտիին տունը, ուր ի պատիւ քննչաց լաւ կերպով հացկերոյթ մը պատրաստած էր յիշեալ էֆէնտին։

Հոգաբարձու Եօրտան էֆ ին կրած ազգասիրական եռանդն ալ արդարև անուրանալի է. կաշխատի բաւական գիւղիս մանկտեաց յառաջդիմութեան և ըստ կանոնի դասատուաց պաշտօնը վարել տալու, որք թէպէտ ինքնին կզգան իրենց պարտաւորութիւնը. ուստի ներեցէք ինձ որ ձեր ներկայութեան ալ մատուցանեմ յիշեալ էֆէնտիի իմ խորին շնորհակալիքս։

Մնամ Ձեր.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՐ ՊՕՂՈՍԵԱՆ
Դասատու Վանուց Վարժարանիս
Օրագիր Թ. 1323.

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԿԱՐԱՊԵՏ ԳԱՐԱԿԷՕՉԵԱՆ.

Շաբաթ առաւօտ (Հոկտ 11). կանուխ ըստ սովորութեան Թերթերնիս մամուլը դրուած միջոցին՝ ի հանալով մեծ. Կարապետ էֆ. Գարակէօզեանի մահը, համառօտիւ մը ծանուցինք զայն մեր ընթերցողաց։

Կարապետ էֆէնտիի այս տարաժամ մահը մեծ ցաւ պատճառեց ամեն կարգի ազգայնոց։

Սա տակաւին երիտասարդ 35 տարեկան հասակին մէջ ունէր ժամանակին պահանջած ամեն բարեմասնութիւն, հարստութիւն, տաղանդ, հմտութիւն, բարեբարոյ վարք. այս ամենը կային հանդուցելոյն վրայ, որով ապագային մէջ մեծ յոյսեր կը տածէր ազգը իւր վերայ. սակայն անագորոյն մահն ամեն յոյս ի դերեւ հանեց։

Սա իւր բազմազբաղ վիճակին մէջ ազգային բաւական պաշտօններ վարեց, երեսփոխան, Ընդհ. ժողովոյ ատենապետ, Քաղաքական ժողովոյ, Վերաքննիչ յանձնաժողովոյ եւ հարստահարութեանց ցանձնախմբի անդամ էր, իւր ամեն պաշտօններուն մէջ միշտ խղճի մտօք ծառայած եւ իւր ընկերաց համարումը գրաւած էր։ Բաց ասոնցմէ, Սամաթիոյ, Նաւլը-գաբուի աղքատիկ վարժարանին բարերարաց մին էր եւ անոնց նիւթական վիճակին օգնելէն զատ, բարոյապէս ալ կօգնէր իւր վրայ պահելով տնօրէնութեան պաշտօնը։